Հուսիկ Արա

Անի

-Անհետացած ժողովրդի քաղաք է սա,-
թուրք զբոսավարն է՝
խռպոտ, հատու,
սկսում պատմությունը Անիի:
Ուշ չեմ դարձնում,
ականջ չեմ կախում անթրաշ մեկնիչին,
հետաքրքրված դիտորդ չեմ այստեղ ես՝
պատահական:

Կամարակապ դարպասից մտնում եմ ներս,
դիմացս զինանշանն է Բագրատունիների՝
հովազ թեթև վարգի մեջ,
փորված որմին:
Քայլում եմ պարիսպների երկարությամբ,
ելևէջով անհամաչափ բլուրների.
լո՞ւռ… չէ՛, խոսում են շշուկով ու փսփսում:

Այս քաղաքը կառուցած արքաների հիշողությունն եմ ես՝
վաղուց և արդեն 1000 տարի:
Ժամանակն է տեղավորվել
փշուրների ու ոտքերիս նեղ արանքում,
որ ավերել է ամեն բան,
բայց անկարող է կտրել կապը

տիրոջ և հողի:

Ամեն ընկած քար թրթռում է ափերիս տակ
և հոգուս մեջ է շնչում ,
հոսում է արյանս հետ ամեն ավերված այուն
և բաբախում սրտիս պես:
Միայն տերը կարող է խոնարհվել
և հասնել իր անկած արժեքներին,
հավասարվել ու նույնանալ՝
ինչպես միս ու արյուն,
որ ես ու քաղաքն ենք հիմա՝
առանց ժամանակի:

Չեմ պատասխանում թուրք զբոսավարին,
որովհետև այս ավերակ ու խոնարհված
հազար ու մեկ եկեղեցիների քաղաքից
Աստծու հետ են խոսում միայն.
ես ժառանգն եմ այս քաղաքը կառուցած արքաների,
հա՛յ եմ,
և իմ ժողովրդի քաղաքն է Անին:

-Տե՛ս, դիմացդ՝
Ախուրյանի ափին,
դրոշն է ծածանվում իմ պետության: